

Արայիկ Բրուսյան

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԶԵՎՈՎ ՊԱՏԺԻ ԿԻՐԱԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԳԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ազատագրված ձևով պատժի կիրառման (այսուհետ նաև՝ Պատժ) օրինականության նկատմամբ դատախազական հսկողությանը վերաբերող գործնականում առկա խնդիրներին և այդ խնդիրների լուծման ուղիներին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքերով թեև սահմանված են պատժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության մասին համապատասխան իրավական կարգավորումներ, սակայն, մեր կարծիքով, նշված իրավակարգավորումները համահունչ չեն ՀՀ սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ամրագրված դատախազության լիազորությունների տրամաբանությանը, էությանը և իմաստին:

Սահմանադրական հիշյալ իրավադրույթի ուժով ՀՀ դատախազությունը (այսուհետ նաև՝ Դատախազություն) լիազորված է հսկողություն իրականացնելու պատժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ, ինչը ենթադրում է, որ այդ լիազորություններն իրացնելիս Դատախազությունը պետք է դատախազական անմիջական ներգործության միջոցներ կիրառելու լիազորություններով օժտված լինի, մինչդեռ, գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատախազությունը (այսուհետ նաև՝ Դատախազություն), բովանդակային առումով, մշտադիտարկողի դերակատարում է իրականացնում և օրենսդրությանը հակասող իրավական ակտ հայտնաբերելիս ոչ թե վերացնում է այն, այլ Պատժը կատարող մարմնին միջնորդություն է ներկայացնում վերանայել օրենսդրությանը հակասող ակտը կամ նման միջնորդություն ներկայացնում է հիշյալ ակտի գործողությունը կասեցնելուց հետո: Հատկանշական է, որ

¹ Հոդվածը ներկայացվել է 04.09.2023թ., գրախոսվել է 15.11.2023թ.:

Դատախազության դիրքորոշմամբ օրենսդրությանը հակասող ակտն օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական վերանայման արդյունքում կարող է անփոփոխ մնալ, որպիսի որոշման իրավաչափությանը դատական կարգով քննարկման առարկա դարձնելու իրավական հնարավորություն Դատախազությանն ընձեռնված չէ:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել պատիժների և հարկադրանքի այլ միջոցներից՝ ազատագրկման ձևով պատժի կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներին, և դիտարկվել են այդ խնդիրների լուծման ուղիները:

Հիմնաբառեր- պատիժ, դատախազական հսկողություն, ազատագրկում, օրինականություն:

Ներածություն

Քրեական իրավունքում «հանցագործություն» և «պատիժ» հասկացությունների դիալեկտիկական կապը դրսևորվում է իտալացի հոգեբույժ Չեզարե Լոմբրոզոյի «Կա հանցագործություն, կա պատիժ, չկա հանցագործություն, չկա պատիժ» կարևորագույն դրույթում: Իր ձևակերպումը «պատիժ» հասկացությունն առաջին անգամ ստացել է ֆրանսիական հեղափոխության՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (1789 թ.):

ՀՀ քրեական օրենսդրությունը, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, ամրագրում է՝ արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով (ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդված): «Nulla poena sine lege»² հնագույն սկզբունքից բխում է, որ քրեական պատիժը կարող է նախատեսվել միայն քրեական օրենքով: Հանցավոր արարքն առաջ է բերում դրանում մեղավորի քրեական պատասխանատվությունը: Քրեական պատասխանատվության ձևերից է պատիժը: Այսինքն՝ քրեական օրենսդրության տրամաբանությունից բխում է, որ պատիժը հանցագործության իրավաբանական հետևանքն է և քրեական պատասխանատվության տրամաբանական ավարտը:

Քրեական պատիժը քրեական իրավունքի գիտության առավել բարդ և բազմաբնույթ հիմնախնդիրներից է, որի տեսական խնդիրները մանրամասն վերլուծության են ենթարկվել իրավաբանական գրականության մեջ:

Պատժի նպատակների սահմանումը քրեական իրավունքի ժամանակակից տեսության և պատմության առավել սկզբունքային ու վիճելի խնդիրներից է: Պատժի նպատակների հիմնախնդիրը ոչ միայն և ոչ այնքան իրավաբանական, որքան փիլիսոփայական է, որը դարերի ընթացքում (հնագույն ժամանակներից

² Չկա պատիժ՝ առանց պատժի մասին օրենքի (լատ.):

մինչև անգլիական և ֆրանսիական հեղափոխությունները) զբաղեցրել է ժամանակի խոշորագույն փիլիսոփաների միտքը: Դեռևս XIX դարում այս խնդրին նվիրված էին 24 ինքնուրույն փիլիսոփայական համակարգեր և ավելի քան 100 իրավաբանական հայեցակարգեր³: XX դարում գիտական միտքն այս խնդրի շուրջ նոր զարգացում ապրեց և այժմ էլ շարունակվում է:

Հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգում պատժի դերը վստահորեն կարելի է համարել ոչ հիմնական, քանի որ հանցավորության աճի միտումը կախված է այլ երևույթներից՝ առավել հզոր, քան պատժի հնարավոր ազդեցությունն է՝ տնտեսական, քաղաքական, կազմակերպակառավարչական և այլն:

Պետությունը, պատժելով հանցագործին, նույնպես կրում է որոշակի կորուստներ՝ կապված արդարադատության իրականացման, պատժի կատարման և այլ հանգամանքների հետ: Այնուամենայնիվ, հասարակության մեջ տիրում է այն թյուր կարծիքը (հատկապես հանցավորության աճի պայմաններում), թե հանցագործությունների կանխման գրավականը քրեական պատիժների խստացումն է: Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը, ազդելով հանցավորության վրա, պահում է այն որոշակի հարթության վրա: Պատիժը վերջին ծայրահեղ միջոցն է, որը պետք է գործի այն պարագայում, երբ հասարակությունն այլևս ի գործու չէ կանխելու հանցագործությունը: Ոչ թե պատիժների խստությունն է ահաբեկում հանցագործներին, այլ օրենքների գործնական, օպերատիվ, արդյունավետ կիրառումը և հանցագործությունների հուսալի բացահայտումը, ասել է թե՛ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կատարման անխուսափելիությունը: Պետության համար առավել նպատակահարմար է և շահեկան կանխել հանցագործությունը, քան պատժել հանցագործին:

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատիժը կիրառվում է սոցիալական արդարությունը վերականգնելու, պատժի ենթարկված անձին վերասոցիալականացնելու, ինչպես նաև հանցագործությունները կանխելու նպատակով:

Քրեական պատժի նպատակները որոշում են պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների խնդիրների հիմնական ուղղությունները: Պատժի նպատակներն այն փաստական արդյունքն են, որին ձգտում է պետությունը՝ դատասպարտելով հանցագործին և կիրառելով նրա նկատմամբ այս կամ այն քրեական պատիժը:

Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների համակարգը հանդիսանում է ՀՀ իրավապահ մարմինների մասը, որոնց կարևորագույն խնդիրն է՝ պայքարը հանցավորության դեմ: Այս խնդրի իրականացմամբ շահագրգռված է ամբողջ հասարակությունը, որը պետական և հասարակական կազմակերպությունների միջոցով սահմանում է մշտական վերահսկողություն և հսկողություն

³ Ст'ю Куре уголовного права. Общая часть. Том 2. Учение о наказании / Под ред. Н.Ф. Кузнецовой и И.М. Тяжковой. М., 1999, էջ 13:

իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ: Բացառություն չէ նաև պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների գործունեությունը, որի նկատմամբ վերահսկողությունն ու հսկողությունն ունեն իրենց առանձնահատկությունները:

Պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողությունն ու հսկողությունն ունեն սոցիալ-իրավական մեծ նշանակություն: Այս գործընթացում առաջին հերթին ապահովվում է օրինականությունը քրեական պատիժների կատարման բնագավառում: Օրենքների և սահմանված կարգի պահպանությունը պատիժներ կատարող մարմիններում և հիմնարկներում ուղղված է և՛ վարչակազմին, և՛ պատիժը կրող դատապարտյալներին: Այդ մարմինների ողջ գործունեությունը հիմնվում է օրենքների խստիվ պահպանման վրա: Վերոհիշյալ մարմինների պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում իրենց գործունեության օրինականության համար:

Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների նկատմամբ վերահսկողություն և հսկողություն ասելով՝ պետք է հասկանալ այդ մարմինների գործունեության և քրեակատարողական օրենսդրության ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների համապատասխանության, իրավախախտումների հայտնաբերման ու վերացման և դրանց կանխման նպատակով իրականացվող դիտարկումների և ստուգումների համակարգ:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողության և հսկողության համակարգը: Հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ սահմանված են պատիժները կատարելու նկատմամբ վերահսկողության և հսկողության տարաբնույթ եղանակներ՝ դատախազական հսկողություն, դատական, գերատեսչական և հասարակական վերահսկողություն:

1. Պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ հսկողության համակարգը.

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Պատիժներ կատարելիս դատախազական հսկողության առարկան են կազմում՝ պատիժներ կատարող մարմիններում և հիմնարկներում, ինչպես նաև ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերում անձանց պահելու օրինականությունը, քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված դատապարտյալների, ձերբակալված ու կալանավորված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց պահելու կարգն ու պայմանները:

Պատիժները կատարելու և հարկադրանքի միջոցները կիրառելու նկատմամբ

դատախազական հսկողությունն իրականացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով:

Քրեակատարողական հիմնարկների և պատիժներ կատարող այլ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության կարևոր եղանակներից է դատական վերահսկողությունը: ՀՀ քրեակատարողական օրենսգիրքն առանձնացնում է դատական վերահսկողությունը որպես պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողության ինքնուրույն տեսակ: Դատական վերահսկողության ձևերը բազմատեսակ են և խիստ արդյունավետ:

Դատարանը վերահսկողություն է իրականացնում պատժի կատարման նկատմամբ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու, հիվանդության պատճառով պատժից ազատելու կամ պատժի կատարումը հետաձգելու հարցերը լուծելիս, ինչպես նաև հարկադրանքի այլ միջոցները կիրառելու նկատմամբ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների կամ անգործության, ինչպես նաև կայացված համապատասխան որոշումների դեմ:

Քրեական պատիժների կատարման նկատմամբ վերահսկողության առավել լայն բովանդակություն ունի գերատեսչականը, որն իրականացնում են վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք, որոնց ենթակա են քրեակատարողական հիմնարկները և պատիժներ կատարող այլ մարմինները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են գերատեսչական վերահսկողություն:

Պետական մարմինների վերահսկողության և հսկողության հետ միաժամանակ գործում է նաև հասարակական վերահսկողության համակարգ: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները կարող են օժանդակել պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեությանը, այդ թվում՝ դատապարտյալների վերասոցիալականացմանը և նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորմանը: Ազատությունից գրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է համապատասխանաբար ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարների հաստատած՝ մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

Հասարակական դիտորդների խմբի գործունեության նպատակներն են՝

ազատագրկվածների և քրեակատարողական համակարգի հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկումը, ազատագրկվածների աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը քրեակատարողական ծառայության հիմնախնդիրները ներկայացնելը, քրեակատարողական օրենսդրությունն ուսումնասիրելը, անհրաժեշտության դեպքում դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, քրեակատարողական համակարգի հսկողության տակ գտնվող անձանց հետ կապված այլ խնդիրների լուծմանը աջակցելը:

2. Պատժի կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ներպետական կարգավորումները.

«Հ սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասին 5-րդ կետի համաձայն՝ Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

«Հ սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասին 2-7-րդ կետերի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար,

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար,

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով,

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը, կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով,

5) անչափահասին դատախարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով,

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով,

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Սույն հոդվածի իմաստով՝ պատիժ են համարվում քրեական օրենքով սահմանված պատժի տեսակները:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դեպքերում ազատությունից զրկումը:

4. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ,

2) ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների, պրոբացիայի շահառուի անձնական գործին,

3) ստուգելու քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին, իսկ նշված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ակտը վերանայելու և այն անփոփոխ թողնելու դեպքում գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, կասեցնելով նշված ակտի գործողությունը, կարող են ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության կամ պաշտպանության նախարարին, որը վերջնականապես լուծում է հարցը (...):»:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության դատախազությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ «Դատախազության մասին» օրենքով սահմանված կարգով:

2. «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում օրենսդրու-

թյանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, սպա դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում (այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն) գործող տեղաբաշխման հանձնաժողովի դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին: Մույն մասով նախատեսված գործողությունը դատախազն իրականացնում է ակտի ստացման պահից մեկ ամսվա ընթացքում: Մույն մասով նախատեսված գործողությունը դատախազն իրականացնում է միայն մեկ անգամ:

3. Մույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ակտը վերանայելու և այն անփոփոխ թողնելու դեպքում գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը կարող են ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության արդարադատության կամ պաշտպանության նախարարին, որը միջնորդագիրն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, վերջնականապես լուծում է հարցը»:

3. Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն.

Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությանը (այսուհետ նաև՝ Դատախազական հսկողություն) վերաբերող իրավական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատախազությունը լիազորված է ստուգելու քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այդ ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին:

Դատախազական հսկողության սահմանները հասկանալու համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել՝ Պատժի ենթարկված անձի հիմնական իրավունքների, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգի, հիմքերի ու պայմանների շրջանակները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման հիմքը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտն է:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեակա-

տարողական օրենսդրության նպատակներն են դատապարտյալի վերասոցիալականացումը, նրա իրավահպատակ վարքագծի ձևավորումը և նոր հանցագործությունների կանխումը, իսկ խնդիրներն են՝ սահմանել պատիժների կատարման և դատապարտյալի կողմից կրման, քրեախրավական ներգործության այլ միջոցների **կիրառման կարգն ու պայմանները**:

Ինչ վերաբերում է Պատիժների կատարման կարգին ու պայմաններին, ապա դրանց վերաբերյալ կարգավորումները սահմանված են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի «Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման կարգն ու պայմանները» վերտառությամբ 3-րդ բաժնում, որի 13-23-րդ գլուխները սահմանում են՝ «Կարճաժամկետ ազատազրկման կատարման կարգը և պայմանները», «Կարգապահական գումարտակում պահելու կատարման կարգն ու պայմանները», «Ազատազրկման և ցմահ ազատազրկման կատարման ընդհանուր դրույթները», «Քրեակատարողական հիմնարկների կանոնակարգը և այն ապահովելու միջոցները», «Պատժի կատարման պայմանները քրեակատարողական հիմնարկներում», «Քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնությունը և սպասարկումը», «Ազատազրկման կատարման առանձնահատկությունները տարբեր տեսակի անվտանգային գոտիներում», «Ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցները», «Ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց աշխատանքը և կրթությունը», «Ազատազրկման կատարման առանձնահատկություններն անչափահաս և մինչև 21 տարեկան դատապարտյալների նկատմամբ», «Պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների բողոքարկման կարգը»:

Այսպիսով, վկայակոչված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը կարող է լինել իրավաչափ, եթե ստուգման ենթակա ակտը վերաբերում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ բաժնի 13-23-րդ գլուխներում սահմանված իրավահարաբերություններին:

Պատժի կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության կառուցակարգի կարևոր բաղադրատարր է համարվում՝ կատարված ստուգման շրջանակներում օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելու դեպքում դատախազական ներգործության միջոցի կիրառումը:

Այստեղ պետք է նկատել, որ գործող օրենսդրության համաձայն՝ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, ապա դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Տեղաբաշխման հանձնաժողով) որոշման դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին: Նշված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ակտը վերանայելու և այն անփոփոխ թողնելու դեպքում չ՛զ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, կասեցնելով նշված ակտի գործողությունը, կարող են ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել համապատասխանաբար չ՛զ արդարադատության կամ պաշտպանության նախարարին, որը վերջնականապես լուծում է հարցը:

Հատկանշական է, որ ինչպես հսկող դատախազի, այնպես էլ չ՛զ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի միջնորդագրերի վերանայման արդյունքում Դատախազության կարծիքով՝ օրենսդրությանը հակասող ակտը կարող է մնալ անփոփոխ: Ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն՝ հիշյալ գործառույթը դուրս է մնացել դատական վերահսկողության տիրույթից, ասել է թե՛ վերանայման արդյունքում անփոփոխ թողնված ակտը դատական կարգով բողոքարկելու իրավական ընթացակարգ չի սահմանվել:

Այսինքն՝ չ՛զ սահմանադրությամբ՝ պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունքով օժտված պետական մարմինը՝ Դատախազությունը, գործող օրենսդրությամբ, բովանդակային առումով, ոչ թե հսկողություն է իրականացնում Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ, այլ իրականացնում է մշտադիտարկողի, օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերողի դերակատարում և գործնականում Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթներն իրականացնելու համար հստակ և ներգործուն գործիքակազմ չունի:

Չ՛զ քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու շրջանակներում Դատախազությունը օժտված է լայն գործիքակազմով, և հսկողություն իրականացնելու գործառույթներն իրականացնելիս՝ հսկող դատախազի կողմից կայացվող որոշումներում տեսանելի է Դատախազության՝ բացառիկ լիազորություններով օժտված լինելու սահմանադրական դրույթի առկայությունը, քանի որ համապատասխան որոշման օրինականությունն ստուգելու շրջանակներում հսկող դատախազը ոչ թե հիշյալ որոշումը վերանայելու միջնորդագիր է ներկայացնում, այլ իր որոշմամբ վերացնում է այն: Այստեղ կարևոր է նկատել, որ հսկող դատախազի նշված որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով, այսինքն՝ հիշյալ գործառույթը գտնվում է դատական վերահսկողության տիրույթում:

Վերոհիշյալի հաշվառմամբ տեսանելի է, որ չ՛զ սահմանադրությամբ և չ՛զ քրեական դատավարության օրենսդրությամբ՝ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու շրջանակներում

Դատախազությունն օժտված է բացառիկ լիազորություններով, իսկ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողության շրջանակներում՝ Դատախազության լիազորությունները իսիստ սահմանափակված են:

Մեր կարծիքով՝ նման մոտեցումը չի բխում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ դատախազական հսկողություն սահմանելու սահմանադրական պահանջի տրամաբանությունից, այսինքն՝ Դատախազության լիազորությունները պետք է լինեն հստակ, ներգործուն և կիրառելի: Ինչպես մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, այնպես էլ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ընթացքում Դատախազության լիազորությունների գործիքակազմը և լիազորությունների բնույթը արմատական տարբերություն չպետք է կրեն՝ սահմանադրությամբ սահմանված կարգով բացառիկ լիազորություններով օժտված լինելու հանգամանքով պայմանավորված:

Վերոհիշյալ հանգամանքների համատեքստում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման շրջանակներում Քրեակատարողական ծառայության մարմինները, դրանց կազմում գործող ստորաբաժանումները, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերը պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող ակտեր կայացնելիս և դրանք վերանայելիս օժտված են լայն լիազորություններով: Այստեղ պետք է ընդգծել, որ Քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի կողմից Պատիժների կիրառման, ինչպես նաև դրանց նկատմամբ Դատախազական հսկողություն իրականացնելու համար օրենքով սահմանված լիազորությունները միտված են դատապարտյալի վերասոցիալականացման, նրա իրավահպատակ վարքագծի ձևավորման, ինչպես նաև վերջինիս նոր հանցագործությունների կանխման գործընթացում օրինականության ապահովելուն: Հետևաբար՝ Պատիժը «կիրառող» և դրա կիրառման օրինականության նկատմամբ «հսկողություն» իրականացնող մարմիններին հատկացված լիազորությունները պետք է հավասարակշռված բնույթ կրեն և պետք է «պիտանի» լինեն նշված նպատակներն իրագործելու համար:

Վերոհիշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ մեր կարծիքով հիշյալ մարմինների գործունեության համար օրենքով սահմանված լիազորությունները հավասարակշռված չեն, Պատիժ կիրառող մարմինների գործունեության և դրա նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի համար օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներն անհամաչափ լինելու պատճառով գործնականում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ Պատիժների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինը՝ Դատախազությունը, գործնականում փաստացի զրկված է հսկողական ֆունկցիա իրականացնելուց:

Այդ կապակցությամբ տեղին կլինի Պատիժների կիրառման նկատմամբ Դատախազական հսկողության շրջանակներում գործնականում առաջացած խնդրահարույց հարցերի քննարկումը:

Այսպես՝

Դատապարտյալ Գ.Գ-ն Տեղաբաշխման հանձնաժողովի որոշման համաձայն՝ տեղաբաշխվել է ՀՀ ԱՆ համապատասխան քրեակատարողական հիմնարկի (այսուհետ նաև՝ ԶԿՀ) կիսաբաց ուղղիչ հիմնարկ (նոր կարգավորումներով միջին անվտանգային գոտի):

2022 թվականի հունվարի 21-ին ԶԿՀ-ի պետը միջնորդագիր է ներկայացրել Տեղաբաշխման հանձնաժողովին՝ դատապարտյալ Գ.Գ-ին պատիժը կատարելու համար մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ (նոր կարգավորումներով՝ ցածր անվտանգային գոտի) տեղափոխելու հարցը քննարկելու վերաբերյալ:

Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 10-ի որոշմամբ դատապարտյալ Գ.Գ-ին պատիժը կատարելու համար մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժվել է:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի (այսուհետ նաև՝ Դատախազ) 2022 թվականի մարտի 31-ի որոշմամբ Տեղաբաշխման հանձնաժողովին միջնորդագիր է ներկայացվել՝ պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 10-ի որոշումը վերանայելու համար:

Դատախազի՝ վերոհիշյալ միջնորդագրի քննարկման արդյունքում Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 10-ի որոշումը թողնվել է անփոփոխ:

Այնուհետև, Դատախազի կողմից 2022 թվականի մայիսի 11-ին և հունիսի 20-ին նույն հիմնավորմամբ կրկին միջնորդագրեր են ներկայացվել Տեղաբաշխման հանձնաժողովին՝ պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի նախորդ որոշումները վերանայելու վերաբերյալ, սակայն դրանք նույնպես Տեղաբաշխման հանձնաժողովի՝ համապատասխանաբար՝ 2022 թվականի մայիսի 25-ի և 2022 թվականի հունիսի 30-ի որոշումներով՝ նույն հիմնավորումներով մերժվել են, և նախկինում կայացված որոշումները թողնվել են անփոփոխ:

Հատկանշական է, որ Դատախազի հիշյալ միջնորդագրերը վերանայելու մասին որոշումներում Տեղաբաշխման հանձնաժողովը՝ վիճարկվող որոշումը օրենս-

դրությանը հակասելու վերաբերյալ Դատախազի դատողությունների կապակցությամբ պատճառաբանություններ չի կատարել, այսինքն՝ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում անտեսվել են հիշյալ ակտն օրենսդրությանը հակասելու մասին Դատախազի պատճառաբանությունները, և նշված ակտի հիմքում դնելով վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ՝ վիճարկվող որոշումը թողնվել է անփոփոխ:

Դատապարտյալ Գ.Գ-ին պատիժը կատարելու համար մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի նախորդ որոշումները վերանայելու վերաբերյալ Դատախազի կողմից 2022 թվականի հուլիսի 25-ին միջնորդագիր է ներկայացվել Քրեակատարողական ծառայության պետին:

Քրեակատարողական ծառայության պետի՝ 2022 թվականի օգոստոսի 5-ի որոշման համաձայն՝ Տեղաբաշխման հանձնաժողովի վիճարկվող որոշումը թողնվել է անփոփոխ:

Պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի նախորդ որոշումները օրենսդրությանը հակասելու հիմքով չէ գլխավոր դատախազի կողմից 2022 թվականի օգոստոսի 29-ին միջնորդագիր է ներկայացվել չէ արդարադատության նախարարին՝ պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ (ցածր անվտանգային գոտի) տեղափոխելու հարցին վերջնական լուծում տալու համար:

Չէ արդարադատության նախարարի պաշտոնակատարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման համաձայն՝ Տեղաբաշխման հանձնաժողովի վիճարկվող որոշումը թողնվել է անփոփոխ: Այստեղ պետք է նշել, որ Քրեակատարողական ծառայության պետի և չէ արդարադատության նախարարի պաշտոնակատարի քննարկվող որոշումներով նույնպես պատշաճ պատճառաբանություն չի կատարվել՝ քննարկվող ակտն օրենսդրությանը հակասելու վերաբերյալ, համապատասխանաբար՝ Դատախազի և չէ գլխավոր դատախազի տեղակալի միջնորդագրերով կատարված դատողությունների վերաբերյալ:

Դատապարտյալ Գ.Գ-ի կողմից Տեղաբաշխման հանձնաժողովի վիճարկվող որոշումը դատական կարգով չի բողոքարկվել, իսկ գործող օրենսդրության համաձայն՝ նման բողոք բերելու լիազորությամբ օժտված է դատապարտյալը կամ վերջինիս պաշտպանը:

Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ Դատախազական հսկողության շրջանակներում Դատախազության դիրքորոշման համաձայն՝ ազատագրվման ձևով պատժի կատարման համար դատապարտյալ Գ.Գ-ն ենթակա է եղել տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ, քանի որ պատժի կրման ընթացքում նրա դրսևորած վարքագիծը

համապատասխանել է ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին, սակայն ինչպես Քրեակատարողական ծառայության համապատասխան մարմինների, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարի համապատասխան որոշման համաձայն՝ դատապարտյալ Գ.Գ-ն մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ (ցածր անվտանգային գոտի) չի տեղափոխվել, մինչդեռ (նույն ժամանակահատվածում) ԵԴ/0038/12/22 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 30-ի որոշման համաձայն՝ դատապարտյալ Գ.Գ-ն պատժի չկրած մասը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է:

Հատկանշական է, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում Դատախազության կողմից ձեռնարկվել է հնարավոր բոլոր գործողությունները՝ դատապարտյալ Գ.Գ-ի վերաբերյալ կայացված օրենսդրությանը հակասող որոշումը վերանայվելու և օրինական ակտ կայացնելու համար, սակայն Դատախազությանը վերապահված լիազորությունները սահմանափակ լինելու պատճառով վիճարկվող որոշումը մնացել է անփոփոխ: Այստեղ պետք է հիշատակել, որ դատարանում քննարկվել և բավարարվել է ոչ թե դատապարտյալին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցը (որի կիրառման համար ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված կարգով դատապարտյալի կողմից դրական վարքագծի դրսևորման ավելի ցածր մակարդակ է պահանջվում), այլ քննարկվել է դատապարտյալին պատժի չկրած մասը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորության հարցը, և արդյունքում Գ.Գ-ն պատժի չկրած մասը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել: Այսինքն՝ նշված դատական ակտի գոյությունն ինքնին վկայում է պատիժը կատարելու համար դատապարտյալ Գ.Գ-ին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի անվտանգային գոտի տեղափոխելը մերժելու մասին Տեղաբաշխման հանձնաժողովի վիճարկված որոշման՝ օրենսդրությանը հակասելու մասին:

Վկայակոչված օրինակի քննարկումից տեսանելի է, որ Դատախազությունը Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ իրական հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ և պիտանի լիազորություններով օժտված չէ: Այդ հանգամանքը կարող է հանգեցնել ձերբակալված կամ կալանավորված, կամ դատապարտված անձանց հիմնական իրավունքների խախտման, ավելին՝ կոռուպցիոն ռիսկերի կամ Պատիժ կիրառող մարմինների և պաշտոնատար անձանց կամայական մոտեցումների: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ պատիժները և հարկադրանքի այլ միջոցները կիրառող մարմինը, որը կրում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ բաժնում սահմանված՝ դատապարտյալի վերաոսցիալականացման, նրա իրավահպատակ վարքագծի ձևավորման, ինչ-

պես նաև վերջինիս նոր հանցագործությունների կանխման գործընթացի իրականացման պատասխանատվությունը, այդ գործընթացում լիազորված է դատապարտյալների վերաբերյալ որոշումներ կայացնելու, և նույնիսկ այդպիսի որոշումները օրենսդրությանը հակասելու դեպքում, այդ նույն գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինը՝ Դատախազությունը, իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ի գործու չէ վերացնելու կամ շտկելու օրենսդրությանը հակասող ակտը:

Վերոհիշյալի համատեքստում հարկ է քննարկել նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության դրույթներ սահմանող «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածների համապատասխանությունը իրավական որոշակիության սկզբունքներին:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատախազական ակտ է համարվում որոշումը, հրամանը, կարգադրությունը, միջնորդագիրը, հանձնարարականը, հանձնարարությունը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

«1. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատախազն ընդունում է որոշում, արձակում հրաման կամ կարգադրություն, ներկայացնում միջնորդագիր կամ առարկություն, տալիս հանձնարարական կամ հանձնարարություն, ինչպես նաև ընդունում է օրենքով նախատեսված այլ ակտեր:

2. Սույն օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև դատավարական օրենսգրքերով նախատեսված դեպքերում և կարգով դատախազն ընդունում է համապատասխան որոշումներ:

(...)

5. Հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազը կարող է միջնորդագիր ներկայացնել դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է դրա քննարկման արդյունքների և ձեռնարկած միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հայտնել միջնորդագիրը ներկայացրած դատախազին»:

Ինչպես «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, այնպես էլ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում են, որ Դատիժների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելիս Դատախազը «օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս վերանայման «միջնորդագիր» է ներկայացնում»:

Վկայակոչված կարգավորումների համակարգային վերլուծությունից տեսանելի է, որ Դատախազությունն իր լիազորություններն իրականացնում է դատախազական ակտեր ընդունելու, արձակելու կամ ներկայացնելու միջոցով,

որոնցից՝ «միջնորդագիր» տեսակի դատախազական ակտը ներկայացվում է հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով: Ակնհայտ է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածով սահմանված՝ Պատիժների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելիս Դատախազը «օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս «վերանայման միջնորդագիր է ներկայացնում» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին այն պարզ, հասանելի և ընկալելի չլինելու պատճառով, քանի որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի բնորոշմամբ «միջնորդագիր» տեսակի դատախազական ակտը դատախազի կողմից կարող է ներկայացվել միայն հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում: Այսինքն՝ Պատիժների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելիս Դատախազի կողմից ներկայացվող «միջնորդագիրն» իր բովանդակությամբ, որպես դատախազական ակտ, սահմանված չէ հիշյալ իրավանորմով, այդ հանգամանքը՝ սահմանված ընդհանուր կանոնից շեղում կարելի է դիտարկել:

Վերոհիշյալի համատեքստում հարկ է քննարկել նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազի միջնորդագրի հիման վրա՝ Քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների, Տեղաբաշխման հանձնաժողովի համապատասխան որոշումները Քրեակատարողական ծառայության պետի կողմից վերանայելու կամ դրանք վերացնելու իրավական հնարավորությունները:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ որոշ դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, ապա դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնել ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ Քրեակատարողական Տեղաբաշխման հանձնաժողովի դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի «Քրեակատարողական ծառայության պետը» վերտառությամբ 26-րդ հոդվածի ուսումնասիրությունից տեսանելի է, որ Քրեակատարողական ծառայության պետն օժտված չէ

Քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմների, ինչպես նաև Տեղաբաշխման հանձնաժողովի համապատասխան որոշումները վերանայելու կամ դրանք վերացնելու լիազորությամբ: Ավելի պարզ՝ վկայակոչվող կարգավորումներով սահմանված է, որ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդագիր է ներկայացնում վերանայել այն, մինչդեռ, քննարկվող ակտերը վերանայելու և որոշում կայացնելու լիազորություն՝ Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով՝ Քրեակատարողական ծառայության պետին վերապահված չէ:

Գործնականում օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազի միջնորդագրի հիման վրա Քրեակատարողական ծառայության պետի կողմից որոշումներ են կայացվում քննարկվող որոշումներն անփոփոխ թողնելու մասին՝ պատճառաբանելով օրենքով նման լիազորություններ Քրեակատարողական ծառայության պետին վերապահված չլինելու հանգամանքը, ինչը նույնպես վկայում է, որ հիշյալ կարգավորումները ևս չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքներին:

Բարձրացված հիմնախնդիրների համատեքստում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 23-րդ գլխում սահմանված իրավակարգավորումների քննարկումը ցույց է տալիս, որ ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը սահմանում է Պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների բողոքարկման իրավական ընթացակարգ: Ըստ նշված կարգավորումների՝ դատապարտյալը, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով, իրավունք ունի բողոքարկելու պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշումը՝ վերադատության կարգով կամ պատժի կրման վայրի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան: Բացի այդ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված են Պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքներն առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դռնբաց դատական նիստում՝ բողոքը բերող անձի կամ նրա փաստաբանի, ինչպես նաև այն պաշտոնատար անձի մասնակցությամբ, որի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ ներկայացվել է բողոք-

քը: Բողոքի քննության արդյունքում կայացված որոշման պատճենն անհապաղ հանձնվում կամ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, բողոքարկվող որոշումը կայացրած կամ վիճարկվող գործողությունն (անգործությունը) իրականացրած պաշտոնատար անձին և նրա վերադաս մարմնին: Դատարանի հիշյալ որոշումը բողոքարկելու իրավունք վերապահված է բողոք բերած անձին, նրա փաստաբանին կամ օրինական ներկայացուցչին, ինչպես նաև պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմին: Վերոհիշյալ կարգավորումների ուսումնասիրությունից տեսանելի է, որ նշված իրավահարաբերությունների նկատմամբ Դատախազական հսկողությունն իսպառ բացակայում է:

Նշված իրավական ինստիտուտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարծես թե ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը՝ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության ընդհանուր կանոնից շեղվել է, և Պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների բողոքարկման իրավական ընթացակարգի նկատմամբ Դատախազական հսկողություն չի սահմանվել: Ակնհայտ է, որ քննարկվող իրավահարաբերությունները ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 3-րդ բաժնի և 23-րդ գլխով սահմանված կարգով՝ վերաբերում են Պատժի կատարման սահմանված կարգին ու պայմաններին, ուստի քննարկվող իրավահարաբերությունների նկատմամբ Դատախազական հսկողության բացակայությունը ոչ միայն կարող է բացասաբար անդրադառնալ վերը նշված որոշումների օրինականության և հիմնավորվածության ապահովման գործընթացին, այլև անհիմն կարգով սահմանափակվում են Դատախազությանը ՀՀ սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակները:

Եզրակացություն

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը պետք է լինի հստակ, ներգործուն և կիրառելի:

Մեր կարծիքով՝ հիշյալ գործառույթի իրականացման շրջանակներում՝ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելու դեպքում ստուգվող ակտը վերացնելու լիազորությամբ Դատախազին օժտելը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման բնագավառում կնպաստի օրինականության ապահովմանը և ամրապնդմանը: Դատախազին նման լիազորություն վերապահելու հետ միաժամանակ՝ Պատիժների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը պետք է գտնվի դատական վերահսկողության ներքո, այսինքն՝ ակտը կայացնող պաշտոնատար անձը կամ մարմինը, կամ վերադաս մարմինը, ինչպես նաև շահագրգիռ անձը (ձերբակալված անձ, կալանավորված անձ, դատապարտյալ), կամ վերջիններիս պաշտպանները (փաստաբանները,

ներկայացուցիչները) կամ օրինական ներկայացուցիչները Դատախազի հիշյալ որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունք պետք է ունենան, և այդ բողոքները դատական կարգով քննարկելու համար պետք է սահմանվի համապատասխան իրավական ընթացակարգ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը և դրանց օրինականության նկատմամբ դատախազական հսկողությանը վերաբերող հիմնախնդիրների լուծման հիշյալ ուղին ընտրելու դեպքում, մեր կարծիքով, կհավասարակշռվեն Պատիժներ կիրառող մարմինների կամ պաշտոնատար անձանց, ինչպես նաև հսկողություն իրականացնող մարմնի լիազորությունները, ինչը, անշուշտ, կնպաստի այդ ոլորտում օրինականության ամրապնդմանը: Ավելի պարզ՝ Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման գործընթացում՝ իրավասու պաշտոնատար անձանց կամ մարմինների որոշումների օրինականությունը կարող է ստուգվել Դատախազության կողմից (հաստատվել դրանց օրինականությունը կամ վերացվել), որպիսի ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով:

Պրականության ցանկ (reference list, список литературы)

1. ՀՀ սահմանադրություն:
RA Constitution.
2. «Դատախազության մասին» ՀՀ օրենք:
RA Law “On Prosecutor’s Office”.
3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք:
RA Penitentiary Code.
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:
RA Criminal Procedure Code.
5. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք:
RA Law “On Penitentiary Service”.
6. Курс уголовного права. Общая часть. Том 2. Учение о наказании / Под ред. Н.Ф. Кузнецовой и И.М. Тяжковой. М., 1999., էջ 13.
Course of criminal law, General Part, Doctrine of Punishment, Edited by Kuznetsova N.F., Tyazhkova I.M., T. 2, M., 1999, p. 13.

Arayik Brutyan

Deputy Head of the Department of Supervision over Legality of Penalties and Other Means of Compulsion of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

THE ISSUES OF PROSECUTORIAL SUPERVISION OVER THE LEGALITY OF THE APPLICATION OF IMPRISONMENT¹

Abstract

The article is dedicated to the practical problems of prosecutorial supervision over the legality of the application of imprisonment (hereinafter also referred to as “Punishment”) and the ways to solve these problems.

Although the Law of the Republic of Armenia “On Prosecutor’s Office” and the Penitentiary Code of the Republic of Armenia define relevant legal regulations on prosecutorial supervision over the legality of the punishments’ application and other coercive measures, in our opinion, the mentioned legal regulations are not consistent with the logic, essence and meaning of the powers of the Prosecutor’s Office stipulated in point 5, part 2 of Article 176 of the Constitution of the Republic of Armenia.

By virtue of the aforementioned constitutional jurisdiction, the Prosecutor’s Office of the Republic of Armenia (hereinafter also referred to as the “Prosecutor’s Office”) is authorized to oversee the legality of the punishments’ application and other coercive measures, which implies that the Prosecutor’s Office must be empowered to apply measures of direct prosecutorial influence when exercising these powers; meanwhile, according to the current legislation, the Prosecutor’s Office of the Republic of Armenia (hereinafter also referred to as the “Prosecutor’s Office”) performs the role of an observer and, upon discovering a legal act that contradicts the legislation, does not abolish it, but files a motion to the body executing the sentence to review the act that contradicts the legislation, or files such a motion after suspension of the said act. It is noteworthy that, according to the position of the Prosecutor’s Office, the act that contradicts the legislation may remain unchanged as a result of the final review in accordance with the procedure established by the legislation, and the Prosecutor’s Office is not given the legal opportunity to make the legality of such a decision subject to judicial review.

The paper addressed the issues of prosecutorial supervision over the legality of punishments and other means of coercion, in the form of imprisonment, and the ways of solving these problems were considered”.

Keywords: punishment; prosecutorial supervision; imprisonment; legality.

¹ The article was presented on 04.09.2023 and was reviewed on 15.11.2023.

Араик Брутян

*Заместитель начальника управления по надзору за законностью исполнения наказаний и иных мер принуждения
Генеральной прокуратуры Республики Армения*

ПРОБЛЕМЫ ПРОКУРОРСКОГО НАДЗОРА ЗА ЗАКОННОСТЬЮ ПРИМЕНЕНИЯ НАКАЗАНИЯ В ВИДЕ ЛИШЕНИЯ СВОБОДЫ¹

Абстракт

Статья посвящена анализу практических проблем прокурорского надзора за законностью применения наказания в виде лишения свободы и выявлению путей решения этих проблем.

Несмотря на то что Закон Республики Армения «О прокуратуре» и Уголовно-исполнительный кодекс Республики Армения определяют соответствующие правовые нормы прокурорского надзора за законностью применения наказаний и других мер принуждения, на наш взгляд, указанные правовые нормы не соответствуют сущности и смыслу полномочий прокуратуры, предусмотренных пунктом 5 части 2 статьи 176 Конституции Республики Армения.

В силу вышеуказанной конституционной юрисдикции Прокуратура Республики Армения уполномочена осуществлять контроль за законностью применения наказаний и других мер принуждения, из чего следует, что Прокуратура должна быть уполномочена применять меры прямого прокурорского вмешательства при осуществлении этих полномочий, поскольку, согласно действующему законодательству, Прокуратура Республики Армения по содержанию выполняет роль наблюдателя и при обнаружении правового акта, противоречащего законодательству, не отменяет его, а вносит в орган, исполняющий наказание, ходатайство о пересмотре деяния, противоречащего законодательству, либо вносит такое ходатайство после приостановления действия указанного деяния. Примечательно, что, согласно позиции Прокуратуры, противоречащий законодательству акт может остаться неизменным в результате окончательного рассмотрения в установленном законодательством порядке, а Прокуратуре не предоставлена законная возможность сделать законность такого решения предметом судебного обсуждения.

В статье рассмотрены вопросы прокурорского надзора за законностью наказаний и других средств принуждения в виде лишения свободы, а также рассмотрены пути решения этих проблем.

Ключевые слова: наказание; прокурорский надзор; лишение свободы; законность.

⁵ Статья была представлена 04.09.2023 и прошла рецензирование 15.11.2023.